

Բարեկամներ, եթե այդ պատիժը անաչառաբար գործադրուի Թուրքիոյ մէջ՝ քչերը արժանիք պիտի ունենան ականջ կրելու:

17 Յուլիս

Հայկական խնդիրն Անգղիոյ խորհրդարանին մէջ միշտ վիճաբանութեան նիւթ կ'ըլլայ. դեր ու դէմ խօսողները պակաս չեն:

Վերջին գումարման մը մէջ Սըր Վ. Լոսըն հետեւեալ կերպով կը յանձնարարէ մեր ազգը:

«Քիչ բան գիտեմ, կ'ըսէ, այս ազգին վրայ, բայց մանկութենէս ի վեր լսած եմ, թէ հայերն ամենամեծ խաբեբաներ են Եւրոպիոյ մէջ». չգիտցուիր թէ հայերը փոխադրուած են Եւրոպա թէ Եւրոպան փոխադրուած է Ասիոյ կողմը:—

Սըր Վ. Լոսընի *Եւրոպիոյ մէջը* խորհրդարանին ծիծաղը կը շարժէ, եւ Սըր Վ. Լոսըն խօսքն ետ առնելով կ'ըսէ.

«Եւրոպիոյ մէջ չէ. աշխարհի մէջ»:

Սըր Վ. Լոսըն մեր ազգին նկատմամբ քիչ բան գիտնալով՝ ծաղրելի չէ այսպէս խօսելուն համար, վասն զի ուրիշներն առանց բանի մը վրայ տեղեկութիւն ունենալու կարծիք կը յայտնեն. Օրինակի համար Մովսէսի *Ազահին* հետեւեալ կտորին մէջ Վալերը.

«*Հարբակօն.*— Վալեր, զքեզ դատաւոր կարգեցին մեր վրայ. ըսէ՛ ուրեմն, ե՞ս իրաւունք ունիմ թէ աղջիկս:

Վալեր.— Յայտնի է որ դուք իրաւունք ունիք:

Հարբակօն.— Բայց գիտե՞ք թէ ինչ է խնդիրը:

Վալեր.— Ո՛չ, բայց դուք չէք կրնար իրաւունք չունենալ. իրաւունքը ձեր քովն է»:

Այսպէս ալ Անգղիոյ խորհրդարանին Վալերը կ'ըսէ հայ ազգին.— չես կրնար խաբեբայ չըլլալ, թէպէտ եւ զքեզ ճանաչելու պատիւը չունիմ:

Ես կը կարծեմ թէ, այս մարդը կտաւի վաճառական մ'է եւ մեր ազգայիններէն մէկէն վնաս տեսած է առուտորի մէջ. ուստի կտաւին վրէժը հայկական խնդիրէն կը լուծէ...

18 Յուլիս

Այսօր նորէն գումարուեցաւ ազգային երեսփոխանական Ժողովն: